Հավելված N 2
ՀՀ փոխվարչապետի
N 516-Լ որոշման

«ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵԴԱԼԻ ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի, երկրորդ աստիճանի և երրորդ աստիճանի մեդալներով (ձևերը կցվում են) պարգևատրվում են ծառայողական պարտականությունները բարեխիղճ կատարած և մասնագիտական բարձր որակներ ցուցաբերած այն ծառայողները, որոնց ծառայության ստաժն օրացուցային հաշվարկով կազմում է համապատասխանաբար առնվազն 20, 15 և 10 տարի:

2. «Անբասիր ծառայության համար» մեդալն իրենից ներկայացնում է 42 մմ տրամագիծ ունեցող ոսկեգույն ութաթև աստղանման սկավառակ: Մեդալի կենտրոնում 25 մմ տրամագծով շրջանաձև վահանի վրա պատկերված է արևախաչի նշանը, որի վրա գրված են ծառայության տարիները՝ «20», «15», «10»: Վահանի եզրագծի վերևի մասում գրված են «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ», իսկ ներքևի մասում՝ «ԷՊԾ» բառերը:

3. «Անբասիր ծառայության համար» մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30 X 45 մմ չափսերով, վրայից ուղղանկյունաձև շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ:

4. «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի մեդալի՝

1) կախիչը կանաչ է, որի կենտրոնով իրարից 2 մմ հեռավորությամբ անցնում են չորս ուղղահայաց 2 մմ լայնությամբ դեղին զոլակներ.

2) մեդալը ոսկեգույն է, կենտրոնում ութաթև աստղի վրա գրված է «20» թիվը, ութաթև ոսկեգույն աստղը գտնվում է կանաչ ֆոնի վրա:

5. «Անբասիր ծառայության համար» երկրորդ աստիճանի մեդալի՝

1) կախիչը կարմիր է, որի կենտրոնով իրարից 2 մմ հեռավորությամբ անցնում են երեք ուղղահայաց 2 մմ լայնությամբ դեղին զոլակներ.

2) մեդալը ոսկեգույն է, կենտրոնում ութաթև աստղի վրա գրված է «15» թիվը, ութաթև ոսկեգույն աստղը գտնվում է կարմիր ֆոնի վրա:

6. «Անբասիր ծառայության համար» երրորդ աստիճանի մեդալի՝

1) կախիչը կապույտ է, որի կենտրոնով իրարից 2 մմ հեռավորությամբ անցնում են երկու ուղղահայաց 2 մմ լայնությամբ դեղին զոլակներ.

2) մեդալը ոսկեգույն է, կենտրոնում ութաթև աստղի վրա գրված է «10» թիվը, ութաթև ոսկեգույն աստղը գտնվում է կապույտ ֆոնի վրա:

7. «Անբասիր ծառայության համար» մեդալի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» և «ECOPATROL SERVICE» բառերը: Մեդալը դարձերեսից համարակալված է:

8. «Անբասիր ծառայության համար» մեդալները շնորհում է էկոպարեկային ծառայության պետը: «Անբասիր ծառայության համար» մեդալների հետ տրվում են վկայականներ:

Ձև

«Անբասիր ծառայության համար» մեդալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ